



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՓՈՐՁԱՇՐՋԱՆԸ ՉԱՆՑԱԾ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ԿՐԿԻՆ ՓՈՐՁԱՇՐՋԱՆ
ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ **Դպրոց**) կառավարման խորհուրդը (այսուհետ՝ **Խորհուրդ**)՝ խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Հերիքնազ Տիգրանյանի, Լյուդվիկ Դավթյանի և Նիկոլայ Հակոբյանի կազմով,

մասնակցությամբ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանի, ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրության 12.23-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

- Փորձաշրջանը չանցած համարվելու հիմքով կրկին փորձաշրջան անցնելու համար վճարման չափը սահմանել՝

- ընդհանուր ընթացակարգով փորձաշրջանն անցնելու դեպքում՝ 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

- պարզեցված ընթացակարգով փորձաշրջանն անցնելու դեպքում՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

ՀՀ փաստաբանական դպրոցի
կառավարման խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

19 մարտի 2018թ.

թիվ 02/08-Լ

ք. Երևան